

ՓՈԽԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՊՈՆԵԶԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԿԿՈՂՄ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ
ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ինդոնեզիայի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, տեւական և երկարաժամկետ հիմքերի վրա առկա բարեկամական հարաբերությունների հետագա ամրապնդման ու համագործակցության խորացման նպատակով և համապատասխան երկրների օրենքներին և կանոններին համաձայն, օգտակար համարելով երկկողմ փոխշահավետ համագործակցության օժանդակությունը և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջազգային խնդիրների շուրջ տեսակետների կանոնավոր փոխանակման հաստատումը, համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈՂՎԵՐԸ I

Կողմերը խորհրդակցությունների համար հիմնելու են երկկողմ համաժողով, այսուհետ՝ Երկկողմ խորհրդակցական համաժողով, որը գումարվելու է հաջորդաբար Ինդոնեզիայում և Հայաստանում՝ առնվազն երկու (2) տարին մեկ կամ երկու Կողմերին փոխադարձաբար հարմար որեւէ ժամկետում՝ նրանց երկկողմ համագործակցության քննարկման և ընդհանուր շահագրգռվածություն ներկայացնող՝ տարածաշրջանային և միջազգային խնդիրների շուրջ տեսակետներ փոխանակելու նպատակով:

ՀՈՂՎԵՐԸ II

Կողմերը խրախուսելու են իրենց դիվանագիտական առաքելություններին և հյուպատոսական ծառայություններին, ներառյալ Միավորված ազգերի և այլ միջազգային կազմակերպություններում իրենց մշտական առաքելությունները, ինչպես նաև ՄԱԿ-ի համաժողովում և մյուս միջազգային համաժողովներում իրենց պատվիրակություններին՝ սերտ համագործակցությունը և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության և տեսակետների փոխանակումն ապահովելու նպատակով:

ՀՈՂՎԵՐԸ III

1. Կողմերը Երկկողմ խորհրդակցական համաժողովի նիստերի շրջանակներում քննարկելու, գնահատելու և օժանդակելու են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող՝ քաղաքական և անվտանգության, տնտեսական, առևտրի, ներդրումների, պաշտպանության, մշակութային, կրթական, գիտական, տեխնոլոգիական, տեխնիկական, հյուպատոսական և այլ բնագավառներում իրենց համագործակցության զարգացումը:

2. Կողմերը նաև իրականացնելու են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող՝ միջազգային և տարածաշրջանային խնդիրների զարգացումների շուրջ տեսակետների փոխանակում և օժանդակելու են տարածաշրջանային ու միջազգային կազմակերպությունների և համաժողովների շրջանակներում իրենց երկկողմ համագործակցությունը:

ՀՈՂՎԵՐԸ IV

1. Կողմերը, եթե անհրաժեշտ գտնեն, կարող են Երկկողմ խորհրդակցական համաժողովի շրջանակներում ստեղծել աշխատանքային խմբեր:

2. Խորհրդակցությունների օրակարգը, ժամկետը և տեղը համաձայնեցվում են

դիվանագիտական ուղիներով:

ՀՈՂՎԱԾ V

1. Երկկողմ խորհրդակցական համաժողովի պատվիրակությունները ղեկավարվելու են համապատասխան Կառավարությունների ղեկավար պաշտոնյաների կողմից, որոնք գործելու են որպես համանախագահներ:

2. Երկու երկրների մյուս նախարարությունների, կառավարական մարմինների, հանրային կազմակերպությունների եւ գործարար շրջանակների ներկայացուցիչները կարող են մասնակցել որպես պատվիրակության անդամներ:

ՀՈՂՎԱԾ VI

Կողմերն օժանդակելու են համատեղ գործունեության եւ ծրագրերի կազմակերպումը եւ համապատասխան իրականացումը, ինչը կարող է փոխադարձաբար համաձայնեցվել Երկկողմ խորհրդակցական համաժողովի նիստերի ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության եւ Ինդոնեզիայի Հանրապետության արտաքին գործերի դեպարտամենտի, ինչպես նաեւ նրանց դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցիչների միջոցով:

ՀՈՂՎԱԾ VII

Սույն Փոխըմբռնման հուշագրում լրացումներ կամ փոփոխություններ կարող են կատարվել ցանկացած ժամանակ՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Կողմերի կողմից համաձայնեցված որեւէ լրացում կամ փոփոխություն ուժի մեջ կմտնի Կողմերի կողմից որոշված պահից սկսած:

ՀՈՂՎԱԾ VIII

Սույն Փոխըմբռնման հուշագրի մեկնաբանության կամ իրականացման շուրջ Կողմերի միջեւ առկա վեճերը պետք է կարգավորվեն բարեկամաբար՝ խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

ՀՈՂՎԱԾ IX

Սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթները չեն շոշափում այն միջազգային պայմանագրերը կամ համաձայնագրերը, որոնց Կողմ են Ինդոնեզիայի Հանրապետությունը կամ Հայաստանի Հանրապետությունը:

ՀՈՂՎԱԾ X

1. Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Պայմանավորվող կողմերը միմյանց գրավոր կ'ծանուցեն, որ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար ներպետական օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ ընթացակարգերը ավարտվել են:

2. Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում հինգ (5) տարի ժամկետով եւ կարող է ինքնաբերաբար երկարաձգվել հաջորդ հինգ (5) տարի ժամկետով, մինչեւ Կողմերից մեկը վեց (6) ամիս առաջ դիվանագիտական ուղիներով նախօրոք մյուս Կողմին գրավոր տեղեկացնի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Ի վկայություն վերոհիշյալի՝ իրենց համապատասխան Կառավարությունների կողմից պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Փոխըմբռնման հուշագիրը:

Կատարված է Ջակարտայում 2005 թվականի հոկտեմբերի 12-ին, երկու օրինակով, հայերեն, ինդոնեզերեն եւ անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման շուրջ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտել 2006 թ հուլիսի 18-ից:

ՀՀԱԳՆՊՏ 2006/ 8(16), ԵՄՊ, 28.12.05, անգլերեն բաժին, հոդ. 10

MEMORANDUM OF UNDERSTANDING

Between the Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Indonesia on the establishment of the bilateral consultative forum

The Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Indonesia, hereinafter referred to as "the Parties";

With a view to further strengthening the existing friendly relations and deepening the cooperation on a lasting and long-term basis and in conformity with the laws and regulations of the respective Countries;

Considering useful the establishment of regular exchange of views on promoting of mutual beneficial bilateral cooperation and of international issues of mutual interest;

Have agreed as follows:

Article I

The Parties hereby establish a bilateral forum for consultations, hereinafter referred to as "Bilateral Consultative Forum", to be convened alternately in Armenia and Indonesia at least every two (2) years or at any time mutually convenient to both Parties to review their bilateral cooperation as well as to hold exchange of views on regional and international issues of common concern.

Article II

The Parties shall encourage their diplomatic mission and consular posts including their permanent missions to the United Nations and other international organizations, as well as their delegations to the UN Conference and other international conferences, to maintain close co-operation and to hold exchange of information and views on the matters of mutual interest.

Article III

1. The Parties, within the Bilateral Consultative Forum sessions shall review, evaluate, and promote the development of their cooperation in the fields of political and security, economic, trade, investment, defense, cultural, education, scientific, technological, technical, consular and other areas of mutual interests.

2. The Parties shall also conduct exchange of views on development of international and regional issues of mutual concern, and promote their bilateral cooperation in the regional and international organizations and fora.

Article IV

1. The Parties, as deemed necessary, may set up Working Groups within the Bilateral Consultative Forum.
2. The agenda of the consultation, date and place, shall be agreed upon through diplomatic channels.

Article V

1. The Delegations of the Bilateral Consultative Forum shall be presided over by Senior Officials of the respective Governments, acting as the Co-Chairman.
2. Representatives of other ministries, government bodies, public organization and business circles of the two countries may participate as Members of the Delegation.

Article VI

The Parties will promote organization and appropriate implementation of joint activities and programs, as may be mutually agreed during Bilateral Consultative Forum sessions, through the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia and the Department of Foreign Affairs of the Republic of Indonesia and through their diplomatic and consular representatives.

Article VII

This Memorandum of Understanding may be added to or amended at any time by mutual consent of the Parties. Any addition or amendment which has been agreed upon by the Parties shall come into effect on such date as will be determined by the Parties.

Any disputes between the Parties on the interpretation or implementation of this Memorandum of Understanding shall be settled amicably through consultations or negotiations.

Article VIII

The provisions of this Memorandum of Understanding shall not prejudice to any international treaties or agreements to which the Republic of Indonesia or the Republic of Armenia is Party.

Article IX

1. This Memorandum of Understanding shall enter into force on the date on which the Parties have notified each other in writing that their respective internal legal procedures for the entry into force of this Memorandum of Understanding have been fulfilled.
2. This Memorandum of Understanding shall remain in force for a period of 5 (five) years and shall be automatically renewed for a successive period of five (5) years unless one of the Parties terminates it in writing through diplomatic channels, by giving six (6) months prior notice.

In witness whereof, the undersigned, being duly authorized by their respective Governments, have signed this Memorandum of Understanding.

Done in duplicate in Djakarta on October 12 2005, in the Armenian, Indonesian and English languages, each text being equally authentic. In case of divergence in interpretation, the English text shall prevail.

The Memorandum of Understanding has entered into force on 18.07.2006.